

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմերը,

առևտրում տեխնիկական խոչընդոտները վերացնելու նպատակով, արտահայտելով ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում համագործակցության զարգացման ձգտումը և ելնելով այդ բնագավառներում միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված սկզբունքներից ու նորմերից և Առևտրի համաշխարհային կազմակերպության Առևտրում տեխնիկական խոչընդոտների (ԱՏԽ) մասին Համաձայնագրի 6-րդ հոդվածի դրույթներից,

դեկլարավելով յուրաքանչյուր Կողմի պետության տնտեսական շահերով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում Կողմերի միջև համագործակցությունն

իրականացվում է յուրաքանչյուր Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերը լիզորում են.

Հայաստանի Հանրապետությունում՝ -----

Վրաստանում՝ Վրաստանի տնտեսական զարգացման նախարարությանը և Հանրային իրավունքի իրավաբանական անձին՝ Ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգերի և չափազիտության ազգային գործակալությանը:

Հոդված 3

1. Կողմերն, իրենց լիազորությունների սահմաններում, փոխադարձաբար ճանաչելով ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության գնահատման գործող ազգային համակարգերը, սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով լիազորած մարմինների միջոցով, կապահովեն համագործակցությունը հետևյալ ուղղություններով.

ա) ստանդարտացում.

- փոխադարձ մատակարարվող արտադրանքի ազգային ստանդարտների ներդաշնակեցում միջազգային ստանդարտներին,

- ստանդարտացման բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում,

բ) համապատասխանության գնահատում.

- Կողմերը՝ իրենց կողմից համաձայնեցված կարգի համաձայն ճանաչում են համապատասխանության գնահատման բնագավառում մյուս Կողմի հավատարմագրված և (կամ) լիազորած մարմիններին, փորձարկման լաբորատորիաներին և կենտրոններին, ինչպես նաև նրանց կողմից տրված փոխադարձ մատակարարվող արտադրանքի սերտիֆիկատները և (կամ) փորձարկման արդյունքները (արձանագրությունը),

- արտադրանքի անվտանգության համար պատասխանատվությունը կրում է արտադրողը, իսկ համապատասխանության գնահատման աշխատանքների արդյունքների հավաստիության համար՝ հավատարմագրված և (կամ) լիազորած մարմինը,

- Կողմերն ազգային օրենսդրությանը համապատասխան իրավունք ունեն կատարել ներմուծվող այն արտադրանքի ընտրովի հսկում, որի վրա տարածվում է Համաձայնագրի գործողությունը: Արտադրանքի այն թերությունների բացահայտման դեպքում, որոնք դրա օգտագործումը դարձնում են վտանգավոր մարդու կյանքի և առողջության, գույքի կամ շրջակա միջավայրի համար, Կողմերն իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան կիրառում են համապատասխան միջոցներ,

գ) չափազիտություն.

Կողմերը, իրենց կողմից համաձայնեցված կարգի համաձայն, ճանաչում են.

- պետական փորձարկումների, չափման միջոցների (այսուհետև՝ ՉՄ) տեսակի հաստատման, ստուգաչափման, ստուգաճշտման, չափագիտական վկայագրման արդյունքները,

- լիազորված, վկայագրված և հավատարմագրված լաբորատորիաները և կենտրոնները, որոնք իրականացնում են ՉՄ-ների ստուգաչափումը, ստուգաճշտումը, չափագիտական վկայագրումը,

- ՉՄ-ների տեսակի հաստատման, ստուգաչափման, ստուգաճշտման, չափագիտական վկայագրման վերաբերյալ վկայականները:

2. Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի տարածքում արտադրվող արտադրանքի վրա:

Հոդված 4

Կողմերը պայմանավորվում են փոխանակել.

1) ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառների ազգային օրենքները և այլ նորմատիվ փաստաթղթերը (ակտերը),

2) ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառների ուսումնական, սեմինարների և համաժողովների ծրագրերը:

Հոդված 5

Կողմերը կցուցաբերեն փոխադարձ աջակցություն ստանդարտացման, չափազիտության և համապատասխանության գնահատման այն միջազգային կազմակերպություններին անդամակցելու և դրանց աշխատանքներին մասնակցելու գործընթացներին, որոնց անդամ է հանդիսանում Կողմերից մեկը:

Հոդված 6

Կողմերը կապահովեն սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվող աշխատանքների վերաբերյալ ստացվող փաստաթղթերի և տեղեկատվության գաղտնիությունը, եթե Կողմերից մեկը նախազգուշացնում է այդպիսի գաղտնիության մասին: Այդ տեղեկատվությունը կարող է փոխանցվել երրորդ կողմին միայն տեղեկատվությունը տրամադրող Կողմի գրավոր թույլտվությամբ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված երկու Կողմերի լիազորած մարմինները կարող են ստորագրել լրացուցիչ համաձայնագրեր և արձանագրություններ:

Հոդված 8

1. Կողմերի միջև տվյալ Համաձայնագրի մեկնաբանման և կատարման ժամանակ առաջացած վիճելի հարցերը կլուծվեն սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով լիազորված մարմինների կողմից՝ փոխադարձ խորհրդատվությունների և բանակցությունների վարման միջոցով:

2. Եթե վիճելի հարցերը լուծվում են լիազորած մարմինների կողմից, ապա 60 օրվա ընթացքում դրանք կլուծվեն Կողմերի միջև բանակցությունների վարման միջոցով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերից յուրաքանչյուրին՝ իր վրա վերցրած միջազգային այլ պայմանագրերին համապատասխան պարտավորությունների կատարումը, որոնց մասնակիցն է հանդիսանում կամ կարող է հանդիսանալ տվյալ Կողմը:

Հոդված 10

Կողմերի նախնական համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ առանձին արձանագրությունների ստորագրությամբ: Արձանագրությունները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում վերջինիս ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով՝ սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Հոդված 11

Համագործակցության ֆինանսավորումը տվյալ Համաձայնագրի շրջանակներում իրականացվում է սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով լիազորած մարմինների միջև պայմանավորվածության հիման վրա:

Հոդված 12

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Դրա գործողությունն ավտոմատ կերպով կերկարացվի հետագա հնգամյա ժամանակամիջոցի համար, եթե Կողմերից

մեկը մինչև հերթական ժամանակամիջոցի ավարտը վեց ամսվա ընթացքում գրավոր չծանուցի մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո դադարեցվում է ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման բնագավառում Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև 1997 թվականի մայիսի 19-ի Համաձայնագրի գործողությունը:

Կատարված է 200--- թվականին -----_քաղաքում, երկու բնօրինակով, հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով: Բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի կատարման ընթացքում դրա դրույթների մեկնաբանման առնչությամբ Կողմերի միջև տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն լեզվով տեքստին:

Հայաստանի Հանրապետության

Վրաստանի կառավարության

կառավարության կողմից

կողմից